

ամէն բանէ առաջ: Աւելի ուշ պիտի իմանայի իր պատերազմները: Մինչեւ այդ ընթացքին, անոր բերնին մէջ սա ժայռաստանը մի սփռնելի դիրք է, ֆետայիին գլուխն ու մարմինը պաշտպանող, անոր յարձակումները դիտող, մանաւանդ նահանջը ապահովող: Ընկեր Մաթիկ վկայութեան կը կոչէ Նափոլէոն կայսրը, որ իր յիշատակներուն մէջ քննադատած է Վաթէրլոյի ճակատամարտին անգլիացի զօրավարը, կռիւր ընդունած ըլլալուն, առանց նահանջը ապահովելու: Այդ ժայռաստանը անշուշտ ամբողջութեանց «մի բնական» շղթայ է հոս: «Սքանչելի» սացցուածքները երկինքէն պարգեւուած պատնէշներ: «Նրանք» կը յիշեցնեն Սասունը, ուրկէ երգեր, հեքիաթ, պատերազմի տէսքաններ իմ երկրորդ մանկութեան հրաշալի աշխարհը կը յօրինեն եւ ուր գիտեմ, թէ «Հանդարտութիւնը կատարեալ է» չարաշուք տարագրութիւններուն նորէն կը թարմանայ: Ըստ Մաթիկի, յեղափոխականը «լինելու» է եւ տնտեսագէտ, ագրոնոմ, ու պիտի հետաքրքրուի գործունէութեան իր շրջանին բերքովը, հողերու պարարտացմամբը, բարեփոխութեամբը: Ու համաձայն այդ տեսութեանց, մօտիկ «ապագայում» սա թշուառական աւանը սահմանուած է ըլլալու մի մեծ ինտուսքրիէլ կենտրոն, քանի կան սա քարերը, որոնց մարմարը ո՛չ միայն կը բաւարարէ ամբողջ Թուրքիոյ քանդակագործական եւ ճարտարապետական կարիքները, այլեւ կը ջախջախէ Յունաստանը, Իտալիան, երբ արտածուի: Յեղափոխականը նոյն ատեն բնական գիտութիւններու ուսուցիչ ալ է, կրային մարգերու մէջ երկրաբանական յեղաշրջումներու փաստերը արժեւորելու ընդունակ: Ու է հողագէտ: Ու է բժիշկ, վիրաւորներու դարմանումին համար տեղական բոյսերու լիակատար օգտագործմամբ մը: Ու ի՛նչ է յեղափոխականը, սա մարմարեղէն ամայքներուն մէջ, սա պզտիկ պտոյտին ընթացքին:

Համառօտած եմ հիմա, երբ այս յուշերը կ'առնեմ գիրի, Մաթիկի մտածումները, տիալէկտիկան, անշուշտ շատ բան զոհելով անոնց շեշտին ջերմութենէն, հարստու-